ԹԱՐԳՄԱՆՉԱՑ ԺԱՌԱՆԳԸ

Օրերս Հոգևոր Ճեմարանի հանդիսությունների դահլիճում, Վեհափառ Հայրապետի բարձր նախագահությամբ, նշվեց Հոգևոր Ճեմարանի դասախոս, պատմաբան, բանասեր, ձեռագրագետ Արտաշես Մաթևոսյանի ծննդյան 75-ամյակը: Ի գնահատումն պրն. Մաթևոսյանի՝ հայ գրչությանն ու մշակույթին մատուցած բազմավաստակ ծառայության, Հայոց Հայրապետը նրան շնորհեց Հայ Եկեղեցու «Ս. Սահակ-Մեսրոպ» շքանշանը. «Արժան և իրաւ»:

Մեծ և բազմաբովանդակ է Հոգևոր Ճեմարանի սիրելի դասախոս Արտաշես Մաթևոսյանի կատարած գործը: Նրա բազմաթիվ հոդվածներն ու գրությունները վերապրեցումն են հայոց բոլոր մեծ ու փոքր գրչության կենտրոնների, բազմարդյուն, բայց երբեմն մոռացված անխոնջ գրիչների, դարերի անցուդարձը տեսած, բայց այժմ գրապահոցներում իրենց խաղաղությունը վայելող հնագույն և նշանավոր մատյանների: Նա խոսել, զրուցել, խոսեցրել և նրանց միջոցով իսկ ճշգրտել է մեր մեծագործ Հայրերին՝ Կորյունին, Խորենացուն, Ճիրակացուն: Եվ այնպես է թվում, թե խոհուն գիտնականը եղել է նրանց կողքին ու նրանց մոտից էլ եկել-հասել մեզ:

Նրա հոդվածներն ու ուսումնասիրությունները մշտապես տեղ են գրավել Մայր Աթոռիս պաշտոնաթերթ «Էջմիածին» ամսագրում, որոնց անվանական պարզ թվարկումն իսկ կարող է մի քանի էջ զբաղեցնել:

Մենք այստեղ, սակայն, չենք ուզում խոսել Մաթևոսյան գիտնականի մասին, այլ մեր ցանկությունն է՝ ներկայացնել Ճեմարանի դասախոսին: 1980 թվականից ի վեր մի քանի սերունդ հոգևորականներ են սնվել այդ անսպառ աղբյուրից, որը, սակայն, գնալով ավելի ու ավելի է առատացել ու կենսաբորոգ դարձել: Նրա անպարփակ սերը դեպի հայ գրի, գրականության թագն ու պսակը հանդիսացող ձեռագրերը չի մնացել սոսկ իր եսական շրջանակի մեջ, այլ որպես միս ու արյուն դարձել է նաև նրա բոլոր տարիների ճեմարանական աշակերտների սեփականությունը: Ապրում է նրանցով մերօրյա ձեռագրահայրը՝ ապրեցնելով բոլորիս: Մենք «արտաշեսյան» բառ ու բանով սովորեցինք հասկանալ ու խոսել և՛ Մաշտոցի, և՛ Կորյունի, և՛ Խորենացու, և՛ Ճիրակացու, և՛ Թորոս Ռոսլինի, և՛ Մոկաց Սարի Ս. Գևորգ վանքի, Մեծոփա վանքի, Լիմ անապատի, Հաղբատի, Սանահինի, Գուգարքի, Գլաձորի, Վաղարշապատի, Երևանի դպրոցների ու գրչության կենտրոնների մեծատաղանդ Հայրերի՝ հայ հոգևոր կյանքի ռահվիրաների հետ:

Իր ծով գիտելիքներով հանդերձ՝ պրն. Մաթևոսյանը ուսանողներիս համար համեստ և խոնարհ մարդ է, ում միջոցով ճշմարիտ պատկերացում ես կազմում և թանձրացած զգում մեր Տիրոջ խոսքը, թե՝ «Եթէ ոք կամի առաջին լինել՝ եղիցի ամենեցուն կրտսեր և ամենեցուն պաշտօնեայ»: Իսկապես համեստագույն լինելու հանգամանքն է, որ դասել է նրան մեծերի շարքում: Յուրաքանչյուրի հետ իր խոսքով, անձանձրույթ վերլուծումներով, պարզաբանումներով ու եզրահանգումներով զրուցում է ոչ որպես մեծադղորդ ու գիտելիքների տարափով ճնշել փորձող «գիտնական», այլ որպես պարզ մի ավետարանական մշակ, ով կարծես անմնացորդ և անսակարկ ցանկություն ունի դարերը կապելու իրար՝ նորին հաղորդել հնի ամբողջ բուրմունքն ու զմայլանքը, նաև կրթել, մշակել, հղկել ու հնարավորություն և կարողություն տալ՝ իր հերթին ևս լինելու ժամանակների շարունակողը: Ճեմարանականներիս մշտապես գրավել են բազմաքանքար այս սքանչելի մարդու դասաժամերը, որոնք, սոսկ տեսական, ուսումնասիրական լինելուց ավելի, շաղախված են կյանքի հետ՝ ունկնդություն դարերի համերգին, ամեն խաչքարի ու շիրմաքարի, ձեռագրի ու գրիչի հետ հազար ու մեկ անգամ ապրելու և վերապրելու ազնվացնող րոպեներ:

Մաշտոցյան Մատենադարանի հսկայածավալ շենքի իր մի փոքրիկ խցասենյակում այսօր ևս Արտաշես Մաթևոսյանը շարունակում է «մի կում ջրով, մի ճշխարով» մեր պատմությունը՝ վեր հանել մագաղաթներից դժգույն և ամենախոնարհ գրչի նման ստորագրել. «Ով եղբարք, ընդօրինակեցաւ յազնիւ և ստոյգ աւրինակաց: Եթէ սխալանք ինչ իցէ, յիմում անհմտութենէ է, անմեղադիր լերուք»:

«Էջմիածին» ամսագրի խմբագրությունը շնորհավորում է բազմաջան գիտնականի ծննդյան 75-ամյակը և այս առիթով Վեհափառ Հայրապետի կողմից «Ս. Սահակ-Մեսրոպ» շքանշանով պարգևատրումը՝ մաղթելով, որ Սուրբ Սահակն ու Սուրբ Մեսրոպը մշտապես բարեխոս լինեն իրենց վաստակի համբուրելի շարունակողի աշխատանքի և կյանքի համար:

Բ. Ա. Գ.